նախագիծ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունում առաջացած կառավարման ճգնաժամի մասին

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 62-րդ եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 52 հոդվածի 6-րդ մասի և 104.1-րդ հոդվածներով,

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

Կոռուպցիան և մենաշնորհները շարունակում են մնալ Հայաստանի տնտեսության և կառավարման համակարգի ամենամեծ չարիքը: Դա հաստատվում է հայաստանյան և միջազգային հեղինակավոր կազմակերպությունների՝ Համաշխարհային բանկի, Համաշխարհային տնտեսական ֆորումի, Թրանսփարենսի Ինթերնեշնլի, Գալլափ Ինթերնեշնլի, Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի, Փոլիսի ֆորում Արմենիա ամերիկյան վերլուծական կենտրոնի գնահատականներով: Հակակոռուպցիոն և հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության մի շարք առանցքային ցուցանիշներով Հայաստանը անթույլատրելի ցածր նիշեր է գրաղեցնում, իսկ կոռուպցիոն բուրգի պատճառած վնասը կազմում է տարեկան ավելի քան 2.5 մլրդ.ԱՄՆ դոլարին համարժեք գումար, այսինքն գրեթե նույնքան, որքան երկրի պետական բյուջեն է:

Երկրում չի հաղթահարվում **աղքատությունն ու գործազրկությունը:** Պաշտոնական տվյալներով վերջին հինգ տարիներին այն տատանվում է 32 - 35%-ի սահմաններում, միևնույն ժամանակ չցուցաբերելով նվազման որևէ միտում:

Ամբողջությամբ վերացել է քաղաքացիների, քաղաքական ուժերի և ողջ հասարակության **վստահությունը ընտրական համակարգի նկատմամբ,** ինչի հետևանքով կասկածի տակ են դրված բոլոր մակարդակի ընտրությունների պաշտոնապես հրապարակված արդյունքները և, հետևաբար, ստեղծվել է իշխանության լեգիտիմության ճգնաժամ:

Այս ամենի արդյունքում թափ է առել և սպառնալի չափերի է հասել երկրից **քաղաքացիների արտագաղթը**՝ վերջին չորս տարիներին կազմելով շուրջ 213 000 մարդ:

Այսպես կոչված նախաձեռնողական քաղաքականության ձախողումների արդյունքում տուժել է Հայաստանի Հանրապետության **միջազգային վարկը:** Սաստկանում է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջազգային մեկուսացումը, որի հետևանքով միջազգային կազմակերպություններում ընդունվում են Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի դիրքերը թուլացնող անբարենպաստ որոշումներ:

Հայաստանի կառավարությունն անկարող եղավ իրականացնելու խորհրդարանական չորս ուժերի առաջարկած՝ **12 կետերից** բաղկացած առաջնահերթ միջոցառումները, դրանով ցույց տալով, որ պատրաստ չէ ընդառաջ գնալ հանրությանը և բավարարել անգամ ժողովրդի նվազագույն պահանջները:

Այսպիսով, երկրում առաջացել է կառավարման համակողմանի ճգնաժամ և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը անհրաժեշտ է համարում այն հաղթահարելուն ուղղված հրատապ քայլերի իրականացումը: